

Հ Ե Կ Ո Յ Ց

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐԶ. ԺՈՂՈՎԻ

ՀՐԱԽԻՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական վարչական ժողովը այսու կը հրաւիրէ Միութեան բոլոր իրաւասու անդամները ներկայ գտնուելու 64րդ Ընդհանուր ժողովին, որ պիտի գումարուի ՇԱՐԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1977, առաւօտեան ժամը 10:00ին, Առաջնորդարանի Կիւլլապի Կիւլպէնկեան Մշակութային Կեդրոնի Գալուֆնեան Սրահին մէջ, 630 Սեֆրետ Էվրնի, Նիւ Եորք, Ն. Ե., ԱՄՆ:

Ներկայս 64րդ Ընդհ. ժողովին համար տրուած միակ հրաւիրագիրն է: Կը խնդրենք հետեւաբար Միութեան յարգոյ իրաւասու անդամներէն, որ ամենապէս ժողովին ներկայ ըլլան վերոյիշեալ քուականին եւ կամ ամենէն ուշը մինչեւ Սեպտեմբեր 6, 1977, իրենց փոխանորդագրերը յանձնեն Հ. Բ. Ը. Միութեան Ընդհանուր Տնօրէնին, կամ գանձագրին հետեւեալ հասցէին:

Armenian General Benevolent Union

Central Board of Directors

628 Second Avenue, New York, N. Y. 10016

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ներկայացում եւ վաւերացում 1976 տարեշրջանի ընդհանուր տեղեկագրի:
2. Ներկայացում եւ վաւերացում 1976 տարեշրջանի ընդհանուր հաշվետուութեան:
3. Մասնակի ընտրութիւն Կեդրոնական վարչական ժողովի:
4. Մասնակի ընտրութիւն Հաշուֆոնիչ Յանձնախումբի:
5. Առաջարկներ եւ քելադրութիւններ:
6. Գնահատանքի քանակներ:

Ի ԴԻՄԱՑ ԿԵԴՐ. ՎԱՐԶ. ԺՈՂՈՎԻ

Ր. Ք. ԿՐԵԿԸՐԻ

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ատենադպիր

Ատենապետ

Մայիս 2, 1977

Նիւ Եորք, Ն. Ե.

Ծանօթ. — Կը խնդրուի իրաւասու այն անդամներէն, որոնք չեն կրնար անձնապէս ներկայ ըլլալ Ընդհանուր ժողովին, իրենց փոխանորդ նշանակել ուրիշ իրաւասու անդամներ: Սոսկ գիւրտութեան համար ներփակուած է մասնակի ցանկ մը իրաւասու անդամներու, որոնք կրնան փոխանորդ ըլլալ: Այս ցանկը սահմանիչ չէ: